**Հիմնական անվանումը՝**
Ճառագայթման դաշտի ազգային չափանմուշ ԱԶ ՀՀ 4-21

**Ստանդարտի անվանումը՝**
Ալեհավաքային համակարգերի ճառագայթային դաշտի պարամետրերի չափման միջոցների պետական հատուկ էտալոն և պետական ստուգաչափման սխեմա 1,5-ից մինչեւ 3,0 մ աշխատանքային բացվածքով 2,5-40,0 ԳՀց հաճախականության տիրույթում:

**Նորմատիվ փաստաթղթեր՝**
ԳOUS 8.414-81

**Երկրի կոդը՝**
AM

**Մասնագետ – պահապան՝**
Անուն, ազգանուն, հայրանուն՝ Պարտիզպանյան Գեղամ Հովհաննեսի
Հեռ.՝ 099721398
e-mail: info@armstandard.am

**Համարը ռեեստրում՝**
ԱԶ ՀՀ 4-21

**Պատրաստող՝**
ՌԶԳՀԻԶ (Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ)

**Չափանմուշի փոփոխման տարին՝**
13.04.2021

**Հաստատման տարեթիվը՝**
ՍՉԱՄ տնօրենի № 44 13.04.2021թ. հրամանը

**Չափագիտական սպասարկում՝**
EM. 10, EM. 11

**Էտալոնի տեսակը՝**
Ազգային չափանմուշ

**Տեխնիկական վիճակը՝**
Աշխատող

**Փաստաթղթերի առկայությունը՝**
Անձնագիր
Պահպանման և կիրառման կանոնները

**Թողարկման տարին՝**
1981

**Վերջին ինվենտարիզացիայի տարին՝** 2020

**Ինստիտուտ-պահապանը.**
**Կրճատ անվանումը՝** ՍՉԱՄ

**Երկիրը՝** Հայաստան

**Ինսիտուտ–պահապանի բաժինը՝** Էտալոնների պահպանման գիտական բաժին

**Իրավաբանական հասցեն՝** Հայաստան, 0051, Երևան, Կոմիտաս 49/4

**Հեռախոսահամարը՝** +374 10 23 26 00

**Կիրառման ճյուղը, կոչումը՝**
Պետական հատուկ էտալոնը նախատեսված է 1.5 մինչև 3.0 բացվածք ունեցող անտենային համակարգերի ճառագայթման դաշտի ուժեղացման գործակցի, լարումների հարաբերության բաշխվածության, չափման հարթությունում ուղղվածության գործողության գործակցի, գլխավոր ուղղությամբ բևեռացման գործակցի և էֆեկտիվ մակերևույթի միավորների վերարտադրման ու պահպանման և երկրորդային էտալոնների ու չափման օրինակելի միջոցների օգնությամբ երկրում չափումների միասնականությունն ապահովելու նպատակով ժողովրդական տնտեսության մեջ կիրառվող աշխատանքային միջոցներին այդ միավորների չափի փոխանցման համար, 2.5÷40,0 ԳՀց հաճախությունների տիրույթում:

**Նկարագրությունը՝**
Չափանմուշն իրենից ներկայացնում է 2 մ տրամագծով պարաբոլային հայելի: Այն լուսավորվում է ռուպորային ճառագայթչով, որն ամրացված է նրան ֆոկուսային հարթության մեջ տեղաշարժող մեխանիզմին: Այն հայելու ծայրին ամրացվում է եռոտանու օգնությամբ: Ճառագայթիչն ընդունիչ գլխիկին (ԳԲՀ բալանսային խառնիչ) միացվում է ուղղանկյուն ալիքատարի հատվածով: Ուժեղացման գործակիցը չափվում է երկու նման անտենաների կիրառմամբ:

**Չափագիտական բնութագրերը՝**
**Նոմինալ արժեքները, դիապազոնը՝**
Ճառագայթման դաշտի վերարտադրելի պարամետրերի միջակայքերը 2,5 ÷ 40,0 ԳՀց հաճախականությունների տիրույթում, ուժեղացման գործակցի համար $1{,}7\cdot10^3 \div 2{,}5\cdot10^5$, լարումների հարաբերության բաշխվածության համար, դԲ 0 ÷ -30, չափման հարթությունում ուղվածության գործողության գործակցի համար $1{,}1\cdot10^2 \div 1{,}4\cdot10^3$, գլխավոր ուղղությամբ բևեռացման գործակցի համար 30դԲ բարձր վեկտորի $0 \div 360^0$ պտույտով, էֆեկտիվ մակերևույթը, $մ^2$ 1,4÷1,6:

**Միավորների վերարտադրման պատահական սխալանքը՝**
Ուժեղացման գործակցի համար չի գերազանցում 0,7 $\cdot 10^{-2}$, ճառագայթման դաշտի լարումների հարաբերության բաշխվածության համար 0 ÷-10 դԲ տիրույթում 0,3$\cdot 10^{-2}$, -10÷-20 դԲ – 0,5$\cdot 10^{-2}$, -20÷-30 դԲ – 0,7$\cdot 10^{-2}$, ուղղվածության գործողության գործակցինը չափման հարթությունում 0,7$\cdot 10^{-2}$, բևեռացման գործակցի համար գլխավոր ուղղությամբ 1,0$\cdot 10^{-2}$, էֆեկտիվ մակերևույթի համար 0.7$\cdot 10^{-2}$ ։

**Չբացառված սիստեմատիկ սխալներ՝**
Ուժեղացման գործակցի համար 1,0$\cdot 10^{-2}$
Լարումների հարաբերության բաշխվածություն; 0 ÷-10 դԲ տիրույթում 0,3$\cdot 10^{-2}$ ,
-10÷-20 դԲ տիրույթում 0,5$\cdot 10^{-2}$, -20 ÷-30 դԲ տիրույթում 0,7$\cdot 10^{-2}$
Ուղղվածության գործողության գործակցի համար 1,2$\cdot 10^{-2}$
Բևեռացման գործակցի համար գլխավոր ուղղությամբ 1,0$\cdot 10^{-2}$
Էֆեկտիվ մակերևույթի համար 1,0$\cdot 10^{-2}$:

**Անորոշություններ՝**
Ստանդարտ անորոշություն, A տիպի
Ստանդարտ անորոշություն, B տիպի
Գումարային ստանդարտ անորոշություն
Ընդլայնված անորոշությունը k = 2

**Լուսանկարները՝**



Պարաբոլային անտենա 2 մ բացվածքով ԳԷՊԻ-2

**Չափանմուշի կազմը՝**
Չափանմուշային ալեհավաք, ներառյալ հայելային ռեֆլեկտոր, փոխարինվող ռուպորների հավաքածու, ռուպորների տեղադրման համակարգ, ԳԲՀ տրակտներ, օպտիկական վեզիր, առանցքային պտույտի համակարգ, չափանմուշային կրկնօրինակ ալեհավաք, ներառյալ հայելի - ռեֆլեկտորը, մի շարք փոխարինվող ճառագայթիչներ, ճառագայթիչների տեղադրման համակարգ, ԳԲՀ տրակտներ, օպտիկական վեզիր, առանցքային պտտման համակարգ, էտալոնային փորձարկման ստենդ, որը պարունակում է պտտող սարք, ավտոմատ կառավարման, ազդանշանի փոխակերպման, տեղեկատվության ցուցադրման և վերամշակման համակարգեր, համակարգիչ, հատուկ գեներատորների, ընդունող սարքերի, պրեցեսսիոն ատենյուատորի հավաքածու և չափման աշտարակներ, փորձադաշտ N 2: